



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ**

**ՈՎ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ, ՄԱՅՐ ԱՍՏՈՒԾՈՅ, ԲԱՐԵՆՕՍԷ ՈՐ  
 ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԴԱԴՐԻՆ ԵՒ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ՍԵՐ ՈՒ  
 ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏՈՒՆ**

***ԱՂՈԹԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ***

Կիրակի, 13 Օգոստոսը տօնն էր Ս. Աստուածածնի վերափոխման, տօն մը, որ նուիրական է իւրաքանչիւր հայու համար. տօն մը, որուն կապուած է դարաւոր անսնդութիւն մը, մեր հայրենի բնաշխարհին ու աշխատանքի արգասիքին հետ կապուած անսնդութիւն մը՝ խաղողօրհնէքը:

Արեւմտեան մեր թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ, Աստուածածնայ տօնը նշուեցաւ իւրայատուկ տօնախմբութեամբ ու հանդիսաւոր Ս. Պատարագով, որուն անարտին, մեր հոգեւոր հայրերը կատարեցին խաղողօրհնէքի արարողութիւն. հայը անսնդաբար այդ օրը իր որթատունկին երախայրիքը կը նուիրէր եկեղեցւոյ, ստանալու համար իր աշխատանքի արգասիքին օրհնութիւնը եւ այս արարողութենէն ետք էր որ կը համտեսէր այս պտուղը. այդպէս կ'ընէին մեր պապերը, այսօր ալ մեր ժողովուրդի գաւակներէն շատերը հաւատարիմ կը մնան այս անսնդութեան ու երեցները զայն կը սորվեցնեն նոր սերունդներուն:

Տօնական այս օրուան արարողութիւնները նաեւ առիթ կու տան մեր ժողովուրդի գաւակներուն, որ աղօթքներով խնդրամատոյց ըլլան Աստուածամօր ու անոր դիմէն իրենց փափաքներուն ու իղձերուն իրականացման համար: Այս տարի, անհատական փափաքներուն միացած էր նա՛եւ ամբողջ հայութիւնը յուզող տագնապ մը՝ Լիբանանի վիճակուած ծանր կացութիւնը: Հետեւաբար, մեր հոգեւոր հայրերն ու անոնց աղօթակից մեր հաւատացեալ ժողովուրդը Կիրակի օր անգամ մը եւս աղօթք բարձրացուցին առ Աստուած ու Աստուածամօր հովանին խնդրեցին Լիբանանի ու անոր ժողովուրդին համար, վասն պատերազմական գործողութեանց դադրեցման, վասն վիրաւոր երկրին ամոքումին:

Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, որովհետեւ այդ օրը նաեւ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնն է: Իր պատգամին համար, Առաջնորդ Սրբազանը ընտրած էր շարականագիրին հետեւեալ տողերը.- »Ով սուրբ Աստուածածին, որ մարդկութեան յաւիտենական լոյս Աստուածը քու մէջդ կրեցիր եւ ծնունդ տուիր աշխարհի փրկիչին՝ Յիսուսի, կ'աղաչենք քեզի որ մարմնացեալ Աստուծոյ

բարեխօսես մեզի համար, որպեսզի լռեն պատերազմները, դադրին թշնամական յարձակումները, երկրի վրայ սեր եւ արդարութիւն հաստատուին ու ամրապնդուին»:

Առաջնորդ Սրբազանը վեր առաւ նուիրական այս տօնին խորհուրդը եւ յիշեցուց այն հրաշալի դէպքերը, որոնք մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսի կողմէ Աստուածամօր երկինք տեղափոխան առաջնորդեցին, ապա նաեւ կանգ առաւ Աստուածամօր այն յատկանիշներուն վրայ, որոնց համար քրիստոնեայ աշխարհն ու հաւատացեալ հայ ժողովուրդը իրենց աղօթքերով կը դիմեն անոր, խնդրելով իր հովանաւորութիւնն ու բարեխօսութիւնը տարբեր ուխտերու կատարման համար: Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ Լիբանանի վրայ յարձակումներուն ու անոնց ընկերացող պատերազմական գործողութիւններուն, ապա կոչ ուղղեց ներկայ հաւատացեալներուն, որպեսզի աղօթք բարձրացնեն առ Աստուած, ի խնդիր Լիբանանի մէջ գոյացող զինադուլին ամրապնդման ու հայութեան համար երկրորդ հայրենիք մը եղած այդ երկիր վերջերուն դարմանումին:

Նոյն օրը, Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան անդամներէն Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան հանդիսապետեց Ս. Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ քարոզեց յընթացս Ս. Պատարագի: Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ Ս. Պատարագ մատուցեց ու յաւուր պատշաճի քարոզեց Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքեմեզեան, որ հիւրաբար մեր Թեմը կը գտնուէր կարճատեւ այցելութեամբ մը: Իսկ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան Ս. Պատարագ մատուցեց ու քարոզեց Զոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ:

Ինչպէս Առաջնորդ Սրբազանը, նոյնպէս ալ մեր պատարագիչ ու քարոզիչ հոգեւոր հայրերը կոչ ուղղեցին մեր ժողովուրդին, որպեսզի օժանդակութեան ձեռք երկարեն Լիբանանի ու մասնակցին այս աղետին առիթով բացուած հանգանակութեան արշաւին:

Ս. Պատարագէն ետք, մեր բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ խաղողի օրհնութեան աւանդական արարողութիւնը: Մեր հաւատացեալ ժողովուրդի զաւակները արարողութեանց աւարտին օրհնուած խաղող տարին իրենց տունները, օրհնաբաշխ այս տօնին մթնոլորտին կամրջելով իրենց ընտանեկան յարկերը:

Նշենք նաեւ, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Ուրբաթ, 11 Օգոստոսին Ս. Պատարագ մատուցուեցաւ ու խաղողօրհնէք կատարուեցաւ «Արարատ» Տան Միշըն Զիլզի կեդրոնին մէջ, ընդ նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր: Պատարագիչն էր Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Զրանդ Զինյ. Երեցեան: Այս առիթով, Առաջնորդ Սրբազանը իր բարեմաղթութիւնները փոխանցեց Տան բնակիչ պատսպարեալներուն եւ հաստատութեան նուիրեալ ծառայողներուն ու վարիչներուն:

### **ON THE FEAST OF ASSUMPTION AND BLESSING OF GRAPES**

MOTHER OF GOD, INTERCEDE FOR THE CESSATION OF WARS AND  
FOR THE ESTABLISHMENT OF LOVE AND RIGHTEOUSNESS IN THE  
WORLD

***PRAYED THE PRELATE***

Sunday, August 13, was the Feast of the Assumption of the Holy Virgin, a feast that is sacred to the Armenian people and one that has a centuries old tradition associated with it, the blessing of grapes.

The parishes of the Western Prelacy celebrated this feast with a ceremonious Holy Mass followed by the blessing of grapes. Centuries ago our forefathers would offer their first fruits to God as a sign of thanksgiving and gratitude, a tradition that has been passed down from one generation to the next and to which we remain loyal to this day.

The Feast of the Assumption also offers an opportunity for the faithful to beseech the Holy Virgin for the realization of their hopes and wishes. This year, alongside each individual's personal wishes, the clergy and faithful once again collectively prayed to God and the Holy Virgin for the protection of Lebanon and the alleviation of suffering the nation and its people have endured.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted Holy Mass at St. Mary's Church in Glendale, which also celebrated its name day. In his sermon, the Prelate spoke of the message of the feast and of the miraculous events that preceded the Assumption, emphasizing the virtues of the Holy Virgin that compel the Armenian people to beseech Her for protection and as intercessor for the realization of their vows. Speaking of the dire situation in Lebanon, the Prelate called on the faithful to pray for the sustaining of the ceasefire and for the restoration of the country that has become a second home to the Armenian people.

On the occasion of the Assumption, H.E. Archbishop Yeprem Tabakian presided over and delivered the sermon at Holy Martyrs Church in Encino. H.G. Bishop Nareg Alemezian, Ecumenical Officer of the Holy See of Cilicia, who was visiting our Prelacy, conducted Mass and delivered the sermon at Holy Cross Cathedral in Montebello. Very Rev. Fr. Muron Aznikian, Co-Director of the Prelacy Christian Education Department, conducted Mass and delivered the sermon at St. Garabed Church in Hollywood.

Following Holy Mass, the blessing of grapes took place in all our churches.

On Friday, August 11, the Prelacy presided over Holy Mass and the blessing of grapes at Ararat Home in Mission Hills. Rev. Hrant Yeretsian, Pastor of Forty Martyrs Church, conducted Holy Mass. On this occasion, the Prelate conveyed his best wishes to the residents and directors.